



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես
մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և
դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ քիմիա

Հետազոտող ուսուցիչ՝ Հռիփսիմե Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝ Խաչիկ Սամուելյանի անվան թիվ
47 միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1	
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	
1.1 Մարդկային հասարակությանը դերը բնապահպանության գործում	5
1.2 Բնապահպանական կուլտուրայի և գիտակցության ձևավորումը՝ որպես դպրոցականների էկոլոգիական աշխարհայացքի հիմք	6
Գլուխ 2 Դպրոցականների բնապահպանական կրթության և դաստիարակության մանկավարժական պայմանները և իրականացման ուղիները	
2.1 Դպրոցականների բնապահպանական դաստիարակության մեթոդները	8
2. 2 Բնապահպանական կրթության և դաստիարակության իրականացումը արտադպրոցական աշխատանքներում	10
Առաջարկություններ.....	15
Եզրակացություն.....	16
Օգտագործված գրականության ցանկ.....	17

Ներածություն

Բնությունը հավերժական աշխարհներից մեկն՝ գեղեցիկ, ուրախ, որը ոչ միայն կարող ենք , այլև պարտավոր ենք դարձնել ավելի գեղեցիկ և ուրախ մեզ հետը ապրողների համար, ովքեր մեզնից հետո պետք է ապրեն նրանում:

Լև. Տոլստոյ

Թեմայի արդիականությունը: Արդի պայմաններում մարդկությանը սպառնում է երկու համարժեք վնաս՝ միջուկային պատերազմը և էկոլոգիական աղետը: Այս պայմաններում անհրաժեշտ է հասարակության անդամների, առաջին հերթին դպրոցահասակների, հոգեբանական, գիտակցական, աշխարհայացքային, արժեքային վերակառուցումը բնության նկատմամբ, որը պետք է դառնա կրթության բովանդակության և դաստիարակության անբաժան մասը:

Հետևաբար այս գործում գլխավոր դերը պատկանում է հանրակրթական դպրոցին, որը պետք է որոշի, թե ինչպիսի իմիջոցներով և ձևերով կազմակերպի բնության պահպանության նկատմամբ դպրոցականների պատասխանատվության դաստիարակումը: Էկոլոգիական դաստիարակաչական աշխատանքների հիմնական իմաստը կոնկրետ բնապահպանական գործունեությունն է, որի ուսումնասիրման օբյեկտներն են՝ հողը, ջուրը, օդը, կենդանիները և բույսերը:

Հետազոտության նպատակը՝

- Աջակցել դպրոցահասակների շրջանում մարդկության արդի հիմնախնդիր հանդիսացող բնապահպանության մասին գիտելիքների ձևավորման գործընթացի իրականացմանը:
- Նպաստել արտաուսումնական և արտադպրոցական աշխատանքների ընթացքում էկոլոգիական կրթության և դաստարակության իրականացմանը:

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումնասիրել դպրոցականների բնապահպանական կրթության և դաստիարակության մանկավարժական պայմանները և իրականացման ուղիները

- Ուսումնասիրել դպրոցականների բնապահպանական դաստիարակության մեթոդները
- Կազմակերպել արտադպրոցական աշխատանքներ բնապահպանական թեմայով:

Հետազոտության մեթոդները: Էկոլոգիական կրթության և դաստիարակության հիման վրա իրականացնել արտադպրոցական և արտաուսումնական հետազոտություններ, դաշտային ուսումնասիրություններ: Մանկավարժական փորձարկում ,դիտարկում,գնահատում:

Գլուխ 1

ԳՐԱԿԱՆ ԱԿՏԱՐԿ

1.1 Մարդկային հասարակությանը դերը բնապահպանության գործում

Դեռևս դարասկզբին Վ.Ի. Վերնադսկին հանձարեղորեն գուշակում էր. «<Ինչի՞ է ձգտում մարդն իր դարավոր աշխատանքով, ի՞նչ դուրս կնետվի ժամանակի խավարից մարդկության և մեր մոտակա սերունդների առջև>>:

Գիտնականների ուսումնասիրությունները և էկոլոգիական արդի ճգնաժամը հաստատեցին մեծ գիտնականի կանխատեսումները: Այսօր, ավելին քան երբևիցե , մարդկությանը անհրաժեշտ է ազատագրվել բնության ուժերի դեմ պայքարողի՝ բնության տիրակալի բարդույթից: Գիտնականների կարծիքով, էկոլոգիական կրթությունն և դաստիարակությունը այն հիմնական ոլորտներն են, որով հնարավոր է փոխել մարդու կողմից բնության նկատմամբ այդպիսի մոտեցումը, և դրա շնորհիվ կհասնենք կայուն զարգացման:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության մեջ իրենց արտացոլումն են գտնում հասարակության զարգացման խոր գործընթացները, բնական, հասարակական, հումանիստական, գիտելիքների միասնականացումը, որի շնորհիվ մարդկությունն պետք է ստեղծի նոր արժեքներ և առաջնորդվի դրանցում ամբողջ գիտակցական կյանքում:

Անհրաժեշտ է նոր մոտեցում էկոլոգիական կրթության նկատմամբ, որի նպատակը պետք է լինի բնության իմաստավորված ընկալումը, նրա հարստությունների նկատմամբ խնայողական վերաբերմունքը, մարդու ներաշխարհի կատարելագործումը: Միայն իրեն՝ որպես մակրոաշխարհի մի մասնիկի, նրա հետ անքակտելի անթիվ կապերով կապված լինելու գիտակցումը թույլ կտա ստեղծել բնության հետ ներդաշնակ հարաբերություններ: Երկրորդ՝ կրթությունը ինքնին դեռևս չի համարվում նրա իրական հասարակական նշանակության իրացումը: Էկոլոգիական կրթությունը ենթադրում է նրա իրացումը սովորողների վարքում, կենսաձևում, հայացքների համակարգում, արժեքների համակարգում, ընտանեկան դաստիարակության մեջ և ամբողջովին ներքին կյանքում:

1.2 Բնապահպանական կուլտուրայի և գիտակցության ձևավորումը՝ որպես դպրոցականների էկոլոգիական աշխարհայացքի հիմք

Հասարակության զարգացման առաջընթացը ավելի ու ավելի մեծ մասշտաբով է վերափոխում բնությունը, մեծացնում մարդու իշխանությունը վերջինիս նկատմամբ: Սակայն միշտ չէ, որ նվաճելով բնությունը՝ մարդը մտահոգվում է դրա բացասական հետևանքներով, որոնք առայժմ մեծ չափերի են հասել:

Ոռոգելով անապատները, չորացնելով ճահիճները, փոխելով գետերի հոսանքը՝ մարդը փոխում է նաև կյանքի կլիմայական պայմանները: Կլիմայի վրա անուղղակի ազդեցություն է թողնում նաև արտադրությունը, քանի որ նավթի, ածխի ու տորֆի այրման ժամանակ տարեկան մթնոլորտ է բարձրանում մոտ 1.5 միլիարդ տոննա ածխածին, իսկ օդում ածխածնի պարունակությունից է կախված երկրի մակերևույթի ջերմությունն

Մարդը պետք է ապրի բնության հետ լիակատար համաձայնության և համերաշխության մեջ, պետք է զգուշանա բնության վերափոխումի և սպառումից: Որպես բնության բաղադրիչ մաս՝ մենք մեր գործունեությունը պետք է պլանավորենք բնական համակարգի ընդհանուր օրենքների հաշվառումով, և այն հիմք պետք է ծառայի մարդկանց վարքի ու գիտակցության մեջ, որակական տեղաշարժերի, հետաքրքրությունների, նորմերի, արժեքների, գիտելիքների բովանդակության փոփոխությունների համար՝ կապված բնության և հասարակության փոխկապակցության հետ: Այն ընդլայնվում է և խորանում դեպի բնությունն ունեցած վերաբերմունքի հաշվին՝ որպես բարոյական գիտակցության ոլորտի արժեքներ: Փիլիսոփաներ Ի.Ա. Բոնդարևայի, Ն.ՆԱ Ղոստովալովայի, Ա.Ֆ. Լիխոդիլսկու, Ն.Վ Կարտամիշևայի, Մ.Ս. Կոզանի կարծիքով, բարձր էկոլոգիական կուլտուրա ունեցող աճող սերնդի դաստիարակությունը թույլ կտա հաղթահարելու հասարակական կյանքի մի շարք բացասական երևույթներ՝ նպաստելով մարդու բնություն ներդաշնակ հարաբերություններին:

Ըստ Ա.Ն. Զախլեբնի. Վ.Դ, Բոնդարենկոյի կարծիքով. «Էկոլոգիական կուլտուրան հանդես է գալիս, որպես անձի ամբողջական որակներից մեկը, որը պայմանավորում է նրա կենսագործունեության ուղղվածությունը՝ իր հետքը թողնելով նրա աշխարհայացքի, գաղափարների, բարոյական ձգտումների, կողմնորոշումների և ստեղծագործական աշխատանքի վրա որոշելով մարդու տեղը սոցիումում»:

Էկոլոգիական կուլտուրայի բնութագրման համար՝ որպես անձի ընդհանուր կուլտուրայի բաղադրամաս, կարևոր նշանակություն ունեն դպրոցականների էկո-կուլտուրայի դաստիարակման հայեցակարգերը, ըստ որի՝ էկո-կուլտուրան անձնավորության նորագոյացումներից է, որը ծնվում ու զարգանում է կենսագործունեության դրդապատճառային, մտածողության և հուզական ոլորտում: Էկո-կուլտուրայի հիմքը համարվում է անձի էկոլոգիական ուղղվածությունը և նրա հասարակական կուլտուրայի մի մասը:

Այն իրենից ներկայացնում է ամբողջական համակարգ, որը բաղկացած է հետևյալ փոխկապակցված տարրերից.

- գիտելիքների համակարգ /բնագիտական, արժեքային, գործնական/

- էկոլոգիական գիտակցություն

- համոզմունքների համակարգ, որը արտացոլում է էկո-կուլտուրայի աշխարհայացքային մակարդակը

- գործնական կարողությունների և հմտությունների համակարգ

- էկո-վարքագծի կուլտուրա

Հանրակրթական դպրոցի առջև խնդիր է դրված հաղթահարել էկոլոգիական դաստիարակության բնագավառում տեղ գտած թերությունները, որպեսզի աճող սերունդը սովորի բնության հետ ապրել ներդաշնակ:

Захлебный А.Н., Суравегина И.Т., Экологическое образование школьников, М Просвещение, 1999. Ասատրյան Լ.Թ., Էկոլոգիական դաստիարակությունը միջին դպրոցում, Երևան, 2000 թ.: Սուխոմլինսկի Վ.Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, «Լույս» 1977թ.:

Գլուխ 2 Դպրոցականների բնապահպանական կրթության և դաստիարակության մանկավարժական պայմանները և իրականացման ուղիները

2.1 Դպրոցականների բնապահպանական դաստիարակության մեթոդները

Էկոլոգիական դաստիարակության մեթոդների և կազմակերպման ձևերի առանձնահատկությունները պայմանավորված են էկոլոգիական գիտելիքների և հմտությունների առկայությամբ, որոնք ուղղված են ուսումնասիրվող առարկաների, ժամանակակից տեխնիկայի, տեխնոլոգիայի, սոցիալ-տնտեսական նոր պայմանների գիտական հիմունքների բացատրմանը և այդ հիմքի վրա ընհանուր էկոլոգիական գիտակցության, հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Էկոլոգիական դաստիարակության և կրթության մեթոդներն ու ձևերը տանում են դեպի դպրոցականների՝ բնության, գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիայի մասին եղած գիտելիքների արդիականացմանը և նշված հիմունքների բացահայտմանը:

Էկոլոգիական մեթոդները բազմազան են և դրանց ընտրության առանձնահատկություններից մեկը հենց նրա անմիջական կախվածությունն է ուսումնական նյութի բովանդակությունից և ուսուցման ձևից:

Այսինքն՝ էկո-դաստիարակությունը և էկո-կրթությունը փոխպայմանավորված են:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է ուսուցանվող նյութով, որի մոդուլը ներկայացնում ենք ստորև:


Այստեղ ցույց է տրվում ուսուցանվող նյութի հաջորդականությունը, որը մշակվել է սովորողների էկո-գիտակցության ձևավորման և նրանց գիտակցության մեջ բնապահպանական գիտելիքների ներմուծման նպատակով.

- Մարդու և բնության միասնության գիտակցումը սովորողների կողմից՝ անձնական փորձի, գիտական փաստերի, գեղարվեստական կերպարների, արժեքային կողմնորոշումների հիման վրա:
- Էկոլոգիական խնդրի առաջադրումը՝ որպես իրական հակասություն բնության և հասարակության փոխազդեցության միջև:
- Էկոլոգիական խնդրի պատմական ակունքների բացահայտումը և նրա լուծումը հասարակության զարգացման տարբեր փուլերում:
- Գիտական, քաղաքական, տնտեսական, բարոյական, գեղագիտական գաղափարների առաջադրում, բնության և հասարակության օպտիմալացում:
- Բնապահպանական իրական հաջողությունների բնութագրում, գործնական օգնություն սովորողներին՝ տեղական էկոլոգիական խնդիրների լուծման, բնության նկատմամբ խնայողական վերաբերմունքի և պատասխանատվության նորմերի յուրացման նպատակով:

Փորձերը ցույց են տվել, որ բնապահպանական գործնական աշխատանքների ժամանակ սովորողների մեջ առավել արգասավոր է ձևավորվում պատասխանատու վերաբերմունք բնական միջավայրի նկատմամբ:

Դպրոցականների կողմից բնության երևույթների ընկալման պատճառահետևանքային կապերը և գործողությունների փուլերը

Սխեմա 1



2. 2 Բնապահպանական կրթության և դաստիարակության իրականացումը արտադպրոցական աշխատանքներում

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության հիմնախնդիր այնքան բարդ և բազմակարգակ է ,որ հնարավոր չէ իրականացնել միայն առարկայական ուսուցման գործընթացում, կախված նրա առաձնահատկություններից և իրականացման պայմաններից:

Արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների յուրահատկությունը ինքնին որոշում է դաստիարակության գործընթացի արդյունավետությունը, այն է՝ դպրոցականների բնապահպանական, բնաճանաչողական , առտաուսումնական գործունեություն, գեղագիտական, բարոյասիրական որակների ձևավորում, որը իրականացվում է ազատ ժամանակի ընթացքում, կամավորության սկզբունքով և հիմնված է նրանց հետքըքրությունների և ինքնուրույնության վրա:

Ստորև ներկայացնում են բնապահպանական և բնաճանաչողական առաջադրանքներ, որոնք տրվել են աշակերտներին:

Առաջադրանք 1

Թեմա՝ «Դպրոցականների դիտարկումները բնության մեջ և բնապահպանական խնդիրների հայտանբերումը »

Պլանավորման փուլ

Հետազոտության օբյեկտը- բույսեր, կենդանիներ, օդ, ջուր և այլն;

Աշակերտներից յուրաքանչյուրը ինքն է ընտրում թե ինչ օբյեկտ է ուսումնասիրելու, որը պետք է ունենա գիտականորեն հայտարարված բնապահպանական նշանակություն:

Առաջադրանք 2

Թեմա՝ «Դաշտային հետազոտությունների մեթոդը ուսուցման գործընթացում»

Միջառարկայական կապեր՝ քիմիա – կենսաբանություն – աշխարհագրություն:

Հետազոտության օբյեկտը՝ թռչուններ

Հետազոտության մեթոդը՝ դիտում, վերլուծություն, տվյալների հավաքագրում

Խնդիրները՝

- Որոշակի ժամանակահատվածում դիտել կենդանիների էկոլոգիական հարմարվածությունը;
- Պարզել, թե ինչպե՞ս են կլիմայական փոփոխությունները ազդում կենդանիների ադապտացիայի վրա:
- Դիտել մարդու ազդեցությունը կենդանիների տվյալ խմբի վրա:

Արդյունքները հավաքագրել և ներկայացնել տեսասահիկով «Պատանի բնասերները» խորհագրով աշակերտական կոնֆերանսի ժամանակ:

Առաջադրանք 3

Թեմա՝ Քիմիական աղտոտումը և դրանից առաջացող բնապահպանական խնդիրները: Ջրի աղտոտում

Հետազոտության օբյեկտը՝ Հրազդան գետ, Գետառ

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումնասիրել Հրազդան գետի և Գետառի ջուրը՝ կատարելով քիմիական անալիզ և լաբորատոր փորձեր:
- Պարզել ջրի որակը, դրանում առկա վտանգավոր քիմիական տարրերի քանակությունը:

Ուսումնական նյութ

Ջրի աղտոտման հետևանքները

- Քիմիական տարրերով ջրի աղտոտումը կարող է պատճառ հանդիսանալ կենսաբազմազանության անկման և զանգվածային ճարպակալման
- Նավթային աղտոտումը (որպես քիմիական աղտոտման մի մաս) կարող է բացասաբար անդրադառնալ ծովային օրգանիզմների զարգացման վրա, իջեցնել դիմադրողականությունը հիվանդությունների նկատմամբ, ազդել վերարտադրողական պրոցեսների վրա, կարող է բացասաբար ազդել լյարդի, երիկամների, ինչպես նաև նյարդային համակարգի վրա
- Կայուն Օրգանական Աղտոտիչները (ԿՕԱ) կարող են հանգեցնել ձկների կյանքի անկման, մուտացիաների և մահվան
- Ջրի մեջ չափազանց շատ նատրիումի քլորիդը կարող է կենդանիների մահվան պատճառ հանդիսանալ
- Կարող է բացասաբար ազդել ջրային բույսերի ֆոտոսինթեզի վրա, այսպիսով ազդելով էկոհամակարգի վրա

- Հողային և ջրային բույսերը կարող են ջրից կլանել վնասակար նյութեր և կեր հանդիսանալով փոխանցել կենդանիներին և մարդկանց
- Բույսերը կարող են ոչնչանալ ջրում պարունակվող մեծ քանակությամբ նատրիումի քլորիդից
- Բույսերը կարող են ոչնչանալ ջրում առկա հերբիցիդներից. հերբիցիդները քիմիական նյութեր են, որոնք առավել վնասակար են բույսերի համար

Քիմիական աղտոտումներ՝ ածխածնի գազանման ածանցյալներ (CO, CO₂), ածխաջրածիններ, ծծմբի ածանցյալներ (SO₂), ազոտի ածանցյալներ (NO, NO₂), ֆոսֆատներ, ծանր մետաղներ, թունաքիմիկատներ, լվացող հեղուկներ և այլն:

Աղտոտման պակասեցման տեսանկյունից (այսինքն՝ էկոլոգիական տեսանկյունից) կարևոր է տարբերել երկու հիմնական աղտոտումներ: Առաջինը՝ կայուն աղտոտվածություն՝ նյութեր և թույներ, ինչպես օրինակ այոււմինե իրեր, սնդիկի աղեր, ֆենոլի միացություններ, DDT, որոնք բնական միջավայրում կամ ընդհանրապես չեն քայքայվում, կամ քայքայվում են շատ դանդաղ: Այլ կերպ ասած, չկան այնպիսի բնական պայմաններ, ուր այդ նյութերը քայքայվել կարողանան այնպիսի արագությամբ, որով դրանք մտնում են էկոհամակարգ:

Երկրորդը՝ այն աղտանյութերն են, որոնք քայքայվում են կենսաբանական պրոցեսների ընթացքում. դրանք են՝ կենցաղային կեղտաջրերը, որոնք հեշտությամբ քայքայվում են բնական կերպով կամ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններում, որտեղ քայքայման և վերականգնման բնական գործընթացները արագացված են: Այսինքն՝ այս խմբին պատկանում են այն նյութերը, որոնց վերամշակման համար առկա է բնական մեխանիզմ:

Հետազոտության ընթացքը՝

Ճանաչողական այց կազմակերպել և քայլել գետերի հուներով մինչև նրանց միացման հատվածը:

Ջուրը վերցնել տարբեր հատվածներից և ենթարկել լաբորատոր զննության:

Այցելություն իրականացնել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, որտեղ իրականացնել ջրի զննությունը:

Եվ ըստ կենտրոնի մասնագետների իրականացրած նոր հետազոտությունների արդյունքում Հրազդան գետում բարձր է պղնձի, կապարի, քրոմի, նիկելի և ամոնյակային ազոտի կոնցենտրացիան: Նախորդ տարվա համեմատ ծանր մետաղների քանակի կտրուկ փոփոխություն չի գրանցվել: Սակայն, այդուհանդերձ, պղնձի կոնցենտրացիան սահմանային թույլատրելի նորման գերազանցել է 17,3, կապարինը՝ 15, քրոմինը՝ 23,6, իսկ նիկելինը՝ 9 անգամ:

Գետի աղտոտման ցուցանիշը 73,2 անգամ գերազանցել է թույլատրելի նորման:

Աշակերտները պետք է ներկայացնեն իրենց առաջարկները կապված գետի
Էկոլոգիական խնդրի լուծման հետ : Ինչպե՞ս է այն ազդում կենդանական աշխարհի
վրա:

Առաջադրանք 4

Թե՛մա՝ Բույսերի տիեզերական նշանակությունը և դրանց պահպանումը

Հետազոտության օբյեկտը՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր

Միջառարկայական կապեր՝ քիմիա – կենսաբանություն – աշխարհագրություն:

Հետազոտության խնդիրները՝

- Կազմակերպել հետազոտական էքսկուրսիաններ դեպի Դիլիջան
ազգայինպարկ, Երևանի բուսաբանական այգի:
- Հավաքագրել տեղեկատվություն ՀՀ-ում առկա էնդեմիկ բույսերի մասին:
- Ստեղծել թղթապանակ ՀՀ-ում աճող դեղաբույսերի մասին, դրանցում
պարունակվող քիմիական տարրերի մասին:

Ուսումնական նյութ

Մեծ է բույսերի տիեզերական նշանակությունը, կանաչ բույսերի միջոցով
իրականանում է Երկրի և Արևի կապը: Բույսերը կլանում և յուրացնում են Արևի
էներգիան, ստեղծվում են կենդանի օրգանիզմները, այդ թվում նաև մարդը:

Այս միտքը նպաստում է, որ աշակերտները հասկանան, յուրաքանչյուրը պետք է
խնայողաբար վերաբերվի շրջակա միջավայրի բուսականությանը, պահպանի և
վերարտադրի այն՝ որպես իր գոյության աղբյուրի:

Կարելի է աշակերտներին հանգամանորեն ծանոթացնել բուսական
համակեցություններին (անտառ, ճահիճ, տափաստան, մարգագետին,
կիսաանապատ և այլն), ինչպես նաև պետական արգելանոցներին (Խոսրով,
Դիլիջան. Շիկահող): Օգտագործելով աշակերտների գիտելիքները նաև
աշխարհագրությունից, նրանց մեջ աետք է ձևավորել ճիշտ պատկերացում այն
մասին, որ բուսական հարստությունը երկրի վրա զգալի է, բայց ոչ անսպառ ու
անսահմանափակ: Մարդկության պահանջմունքների անընդհատ աճը,
բնականաբար, բուսական ռեսուրսների արագ սպառման պատճառ կարող են
դառնալ: Դրա համար էլ մարդը պետք է իմանա, թե ինչքան և ինչպիսի՞ բուսական

հարստությունն նա կարող է օգտագործել, որպեսզի չխախտվեն տեսակների և համակեցությունների վերականգնման գործընթացները: Նպատակահարմար է, որպեսզի այս թեմայի ուսուցումը կազմակերպվի բնության գրկում էքսկուրսիայի ժամանակ, որի նպատակը կլինի կոնկրետ հավաքած նյութերի հիման վրա կատարել փաստերի ընդհանրացում (բուսական համակեցության պահպանության անհրաժեշտությունը):

Էքսկուրսիայի ընթացքում, երբ աշակերտները ընդհանուր գծերով ուսումնասիրում են բուսական համակեցությունները, դրանց տեսակային բազմազանությունը, ապա նպատակահարմար է առաջադրել հետևյալ հարցը՝ « Ի՞նչ կլինի, եթե ոչնչանա բուսական համակեցությունը»: Դրա բազմաթիվ հետևանքներից բացի (թթվածնի քանակի պակասում մթնոլորտում, սննդի աղբյուրների կորուստ, կենդանիների բնակատեղերի ոչնչացում, մարդու հանգստավայրերի կորուստ և այլն):

Հարկավոր է նշել նաև տարբեր արժեքավոր նյութերի հարուստ աղբյուրների կորստի մասին: Օրինակ՝ անտառային համակեցությունում կան բազմաթիվ դեղաբույսեր: Անտառի ոչնչացման դեպքում, ոչնչանում են դեղերի աղբյուր հանդիսացող շատ դեղաբույսեր: Իսկ դեղորայքային թողարկման ցուցակում նշված է, որ դեղերի 45 %-ը ստանում են ծաղկաբույսերից, 2 %-ը՝ սնկերից և բակտերիաներից (անտիբիոտիկներ). 8 %-ը ունի կենդանական ծագում, 18 %-ը՝ անօրգանական և միայն 27 %-ը ստանում են քիմիական եղանակով:

Ուսուցիչը պետք է ընդգծի, որ բուսական աշխարհի մի մասը առայժմ լրիվ բացահայտված և ուսումնասիրած չեն և արգելոցների ու արգելավայրերի ստեղծումը պայմանավորված է և՛ դրանով, և՛ բուսական համակեցությունների ու կենդանական տեսակների պահպանությամբ:

<https://farbitis.ru/hy/economic-geography/> <http://agroecoarm.com/wp-content/uploads/>

«Շ. Աիմոնյան, Ա. Լալայան. Հոգեբանություն, մի քանի հարցեր» Երևան. 1980, էջ 61-62. « Ա. և. Ավագյան, Տ. Վ.

Թանգամյան, Ա. Ա. Փասպարյան, Կենսաբանություն, 5-րդ դասարանի համար» Երևան, 1999 թ.. էջ-13:«Շուբլինա.

Բուսաբանության ուսուցման մեթոդիկան խմբագրությամբ Պատակոյի և Ֆյոդորովայի »1973 էջ 310:

Առաջարկություններ

1. Բնապահպանական կրթությունն և դաստարակությունն դպրոցում իրականացնելու համար առաջարկում է ուսումնական գործընթացին համընթաց դպրոցներում ստեղծել բնապահպանական խմբակներ, ակումբներ, հետազոտողների խմբեր որոնք ամեն ամիս կիրականացնեն որևէ տեղամասի էկոլոգիական խնդրի ուսումնասիրություն բարձրաձայնելով դրանց մասին:
2. Կազմակերպել հանդիպումներ, սեմինար-քննարկումներ Շրջակա միջավայրի նախարարության տարբեր ոլորտների մասնագետների հետ , որոնք աշակերտներին կներկայացնեն ՀՀ-ու առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները :
3. Հաճախ կազմակերպել ուսուցողական և ճանաչողական էքսկուրսիաներ ՀՀ տարբեր մարզեր արժևորել մեր երկրի բուսական և կենդանական աշխարհը, ցույց տալ դրանց դերը և նշանակությունը:

Եզրակացություն

- ✓ Այսպիսով էկո-դաստիարակությունը և էկո-կրթությունը փոխապայմանավորված են և դրանց արդյունավետությունը պայմանավորված է ուսուցանվող նյութով:
- ✓ Սովորողների էկո-գիտակցության ձևավորման և նրանց գիտակցության մեջ բնապահպանական գիտելիքների ներմուծումը պետք է իրականացնել հետևյալ մոդուլով.
 - Մարդու և բնության միասնության գիտակցումը սովորողների կողմից՝անձնական փորձի,գիտական փաստերի,գեղարվեստական կերպարների, արժեքային կողմնորուշումների հիման վրա:
 - Էկոլոգիական խնդրի առաջադրումը՝որպես իրական հակասություն բնության և հասարակության փոխազդեցության միջև:
 - Էկոլոգիական խնդրի պատմական ակունքների բացահայտումը և նրա լուծումը հասարակության զարգացման տարբեր փուլերում:
 - Գիտական,քաղաքական,տնտեսական,բարոյական,գեղագիտական գաղափարների առաջադրում,բնության և հասարակության օպտիմալացում:
 - Բնապահպանական իրական հաջողությունների բնութագրում,գործնական օգնություն սովորողներին՝տեղական էկոլոգիական խնդիրների լուծման,բնության նկատմամբ խնայողական վերաբերմունքի և պատասխանատվության նորմերի յուրացման նպատակով:
- ✓ Արտաուսումնական և արտադպրոցական աշխատանքների էությունը ուսումնական նյութի առավել խորացումն էու զարգացումն է, որի հիմքում ուսուցիչը դնում է բնապահպանական դաստիարակության ձևավորման սկզբունքը, դպրոցականների մեջ ձևավորում բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք:

Գրականության ցանկ

1. Ա. Լ. Ավագյան, Տ. Վ. Թանգամյան, Ա. Ա. Գասպարյան, Կենսաբանություն, 5-րդ դասարանի համար, Երևան, 1999 թ.. էջ-13:
2. Ամիրջանյան Յու.Ա., Պրոբլեմային ուսուցումը և ուսուցիչը, Երևան, «Լույս»1995թ.:
3. Ասատրյան Լ.Թ., Էկոլոգիական դաստիարակությունը միջին դպրոցում, Երևան,2000 թ.:
4. Սուխոմլինսկի Վ.Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, «Լույս» 1977թ.:
5. Շուբկինա. Բուսաբանության ուսուցման մեթոդիկական խմբագրությամբ Պատալկոյի և Ֆյոդորովայի ,1973 էջ 310:
6. Շ. Աինոնյան, Ա. Լալայան. Հոգեբանություն, մի քանի հարցեր,Երևան. 1980, էջ 61-62
7. Захлебный А.Н., Суравегина И.Т., Экологическое образование школьников, М Просвещение, 1999.:
8. <https://farbitis.ru/hy/economic-geography/>
9. <http://agroecoarm.com/wp-content/uploads/>